ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 28 >> << դեկտեմբերի >> 2020թ. N ՀՊ/499-2020

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և <<Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով , հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N1919-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից դրամական աջակցության նպատակով հատկացնել 5 550 000 /հինգ միլիոն հինգ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ գումար Արցախյան պատերազմում անհայտ կորած զինծառայողների ընտանիքների անդամներին՝ որոնողական աշխատանքների հետ կապված տրանսպորտային ծախսերի փոխհատուցման համար յուրաքանչյուրին 50 000 / հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստ Ա.Հովհաննիսյանին՝ սահմանված ժամկետում կատարել գումարի վճարում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

0901 ք. Արմավիր, Աբովյան 71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 28.12.2020 19:01:16 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am